ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխարհագրություն

ԹԵՄԱ՝ Արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրության դասավանդման ընթացքում

Կազմեց՝ Հակոբյան Նարա

Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ

/դպրոցի անվանումը/

Ղեկավար՝ Գ. Հայրապետյան

Կապանի N 2 ավագ դպրոց ՊՈԱԿ

/վերապատրաստող կազմակերպության անվանումը/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ. 5

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ. 8

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ. 12

ԳԼՈՒԽ 2. 1
ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ. 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

Ա. Դիստերվեգ

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից:

Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց պահանջները, կրթության մասին վերաբերմունքը, փոխվում են իրենք, փոխվում է արժեքային համակարգը: Եվ ուսուցիչները տեղեկատվության հոսքի աճին զուգընթաց սկսում են նոր տեղեկությունները նորովի ուսուցանելը, կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ ձևավորելը: Սա է պատճառը, որ ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորության կարիք ունի :

Թեմայի արդիականությունը՝ առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ կանգ ենք առել երեխաների ուսումնառության ընթացքում արժեքային համակարգի ձևավորման վրա: Այս հարցին հարկավոր է անդրադառնալ յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան,այլ խիստ որոշակի և հստակ:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հետազոտության խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. վերլուծել դասապրոցեսը ,
3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները,
4. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն անդրադառնալիս նպատակային ենք համարում նախ խոսել մանկավարժական մշակույթի, դրա ձևավորման և կիրառման մասին՝ գտնելով, որ ուսուցիչը նախ ինքը պետք է լինի այդ արժեքային համակարգի կրողը: Մանկավարժական մշակույթի խնդրի հետազոտության սկիզբը կարելի է համարել 20–րդ դարի 70–80–ական թվականները, երբ մանկավարժական մշակույթը սկսեց դիտարկվել որպես մշակույթի դրսևորում և հասարակության հոգևոր գործունեության որոշակի արտահայտություն: Ընդհանուր մշակույթը և մասնագիտական մշակույթը դիտարկվում են փոխադարձ կապի մեջ և փոխպայմանավորված են միմյանցով: Ուսուցչի մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա և ունի իմացական–ճանաչողական, տեղեկատվական, հաղորդակցական գործառույթներ: Կրթության անձնակողմնորոշիչ հայեցակարգի ձևավորման արդյունքում սկսեցին ուսումնասիրվել մանկավարժական մշակույթի առանձին կողմեր՝ բարոյաէթիկական, հաղորդակցական: Ներկայումս «մանկավարժական մշակույթ» հասկացությունը ներառում է և՛ հոգեբանամանկավարժական գիտելիքները, և՛ մանկավարժի էթիկան, տակտը, մանկավարժական տեխնիկան, խոսքի մշակույթը, մեթոդական վարպետությունը, անձնային հատկանիշները: Այս մոտեցումը մեծ մասամբ պայմանավորված է նրանով, որ «մանկավարժ» հասկացությունը բովանդակում է մասնագիտությունը, սոցիալական դերը, գործունեության ձևը, անձի ուղղվածությունը:

Մանկավարժական մշակույթը ուսուցման և դաստիարակության գործընթացում դրսևորվում է որպես ամբողջական համալիր՝ ներառելով ոչ միայն ընդհանուր գծեր, այլև յուրաքանչյուր դասավանդողի անձնային հատկանիշները: Մանկավարժական մշակույթի տիրապետման գործընթացը բազմաշերտ և երկարատև գործընթաց է, որը պահանջում է անընդհատ ինքնակատարելագործում, ինքնակրթություն և ինքնազարգացում: Մանկավարժական մշակույթը մանկավարժական գործընթացի պայմաններում ընդհանուր մշակույթի յուրահատուկ դրսևորում է: Վ. Ա. Բարաբանշչիկովը մանկավարժական մշակույթի հիմնական բաղադրատարրեր է դիտարկում հոգեբանամանկավարժական գիտելիքների իմացությունը, բարոյական անբասիր կերտվածքի, մտավոր և հուզական հատկանիշների ներդաշնակ զուգակցումը, գիտական, մանկավարժական, հետազոտական ունակությունների համատեղումը, մեթոդամասնագիտական հմտությունները, անընդհատ ինքնակատարելագործումն ու պահանջկոտությունը իր գիտելիքների նկատմամբ[1] :Մի շարք հետազոտողներ, ելնելով այսօրվա իրականությունից, որում առկա են կրթության մարդասիրացման կայուն միտումներ,

[1]А. В. Барабанщиков, Проблемы педагогической культуры преподавателей вузов (к вопросу о сущности педагогической культуры) // Советская педагогика, 1981, № 1, с. 73.

փորձ են անում տալ 21–րդ դարի ուսուցչի լիարժեք նկարագիրը: Վ. Ի. Անդրեևը ներկայացնում է երրորդ հազարամյակի ուսուցչի անձի մոդելը, որին հատկանշական են՝

• կրթվածությունը՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքներ, առաջադիմական հայացքներ, բարձր բարոյականություն, գեղագիտական ճաշակի և հոգևոր մշակույթի զարգացվածություն, ստեղծագործական ինքնազարգացում,

• հոգևոր զարգացած ներաշխարհը՝ բարոյական բարձր հատկանիշները, սերը դեպի երեխաները, մասնագիտական կոչման և կյանքի նպատակների գիտակցումը, միջանձնային հարաբերությունների ներդաշնակությունը, դիմացինի հոգին թափանցելու, անդրադարձ կատարելու ունակությունը,

• ստեղծագործական հատկանիշները՝ նորի և ինքնատիպի որոնումը, ստեղծագործական գործունեության դրդապատճառների առկայությունը, իր և սաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը, կյանքում, մասնագիտական գործունեության մեջ և մշակույթի աշխարհում ազատության զգացումը և ինքնորոշման ունակությունը,

• ազատությունը՝ անձնական և մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակը, հոգևոր և նյութական արժեքների աշխարհում կողմնորոշվածությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, կենսական դիրքորոշումը,

• մարդասիրությունը՝ գթասրտությունը, այլոց օգնելու ունակությունը, համբերատարությունը, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու կարողությունը, աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների հետ համագործակցելու ձգտումը,

• քաղաքացիական ակտիվությունը՝ շրջապատում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների գնահատումներում դատողությունների և վերլուծությունների օբյեկտիվությունը, հայրենասիրությունը, պարտքի և պատասխանատվության զգացումը, լավատեսությունը, իր և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը,

• մրցունակությունը՝ ժամանակի ոգուն և մասնագիտական պահանջներին համապատասխանությունը, մանկավարժական առաջադիմական փորձի ուսումնասիրումը, այդ փորձի ստեղծագործաբար կիրառումը և զարգացումը, հետազոտական աշխատանք կատարելու ունակությունը, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը, աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ձգտումը,

• հաղորդակցումը մշակույթին՝ սոցիալ–մշակութային իրավիճակների վերաբերյալ գիտելիքներ, ժողովրդական ծեսերի, սովորույթների և ավանդույթների իմացություն, արվեստի տեսակների վերաբերյալ գիտելիքներ և խոր հետաքրքրություն, սովորողների մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում[1] : 21–րդ դարի ուսուցչի՝ Վ. Ի. Անդրեևի կողմից առաջարկվող մոդելի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական բարձր մշակույթի, լինի արժեհամակարգի կրող: Մանկավարժը, որը տիրապետում է մանկավարժական մշակույթի բարձր մակարդակի, ունի սեփական ոճը, մանկավարժական անհատական ձեռագիրը, ձգտում է կերտել մանկավարժի օրինակելի կերպար: Մանկավարժական մշակույթը համամարդկային մշակույթի մի մասն է, որը միավորում է մանկավարժական պատմամշակութային փորձը և կարգավորում է մանկավարժական փոխներգործության ոլորտը: Մենք լիովին համաձայն ենք այն դիտարկմանը, որ մանկավարժական մշակույթի մակարդակը փոխադարձաբար կապված է կրթադաստիարակչական գործընթացի մակարդակի հետ: Բայց և այնպես, մեր կարծիքով, այդ անընդհատ գործընթացի մեջ է ամփոփված մշակույթի էությունը. մարդը (տվյալ դեպքում՝ ուսուցիչը) կախված է հասարակության ընդհանուր մշակույթի զարգացումից, բայց և հասարակության մշակույթի զարգացումը կախված է նրա յուրաքանչյուր անդամի անհատական մշակույթից: Ուսուցչի անձի մանկավարժական ուղղվածությունից (անձնային որակներ, մեթոդամասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, հոգեբանամանկավարժական խորագիտություն, վարք, հաղորդակցում և այլն) են կախված մանկավարժական գործունեության իրականացման բնույթն ու արդյունավետությունը: Այդ գործոններն են պայմանավորում ուսուցչի ինքնակատարելագործումը, որը նրա հետագա գործունեության մեջ արտահայտում է վարքային դրսևորումներ մշակույթում, մանկավարժական մտածողության մեջ, որն էլ հանգեցնում է ուսուցչի կողմից մանկավարժական մշակույթի հստակ ըմբռնմանը և յուրացմանը: Ապագա ուսուցիչների մանկավարժական–մասնագիտական մշակույթին , արժեքային համակրգին նվիրված հետազոտություններում (Օ. Ա. Շկիլյովա, Ա. Է. Կորոբովա, Մ. Վ. Նիկոլանա և այլք) մանկավարժական մշակույթը դիտարկվում է որպես մանկավարժի մասնագիտության կարևոր հատկանիշ, ուսուցչի կողմից մարդկության մանկավարժական փորձի տիրապետման որոշակի աստիճան, մանկավարժական արժեքների անընդհատ զարգացող համակարգ, ուսուցչի գործունեության միջոց և վարքի արտահայտություն[1]:

---

[1] Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2, с. 55.

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

• մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,

• իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,

• գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,

• մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,

• մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,

• ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը[1]: Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը: Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ–միջոցներ–արդյունք–վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության,

[1] Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87,

երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ:

Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից

անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք ուսուցչի կերպարին և դերին:

Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, անհիմն է, և կրում է մտահայեցողական բնույթ: Մանկավարժական հետազոտությունը ինքնանպատակ չէ,այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման ուղիները:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն: Հետազոտության ընթացքում պետք է որոնել նոր տվյալների, երևույթների փաստարկված բացատրություն, համալրել և ճշտել առկա տեսակետները, չվախենալ գիտական համարձակության դրսևորելուց: Հետազոտողի վարպետությունը այն է, որ ուղիներ և միջոցներ գտնի երևույթների էության մեջ թափանցելու համար, չդրսևորելով սուբյեկտիվություն, սրա հիմքը մարդկանց պրակտիկ գործունեությունն է: Մանկավարժական հետազոտության արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժական գործընթացների ու երևույթների համակողմանի ուսումնասիրությունից:

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ.

1. ստեղծել ենք բարյացակամ միջավայր,
2. ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,
3. ընտանիքներին ընձեռել ենք մեզ հետ համագործակցելու հնարավորություն,
4. առաջնորդվել ենք մեր աշակերտների անհատական կրթական կարիքներով,
5. աջակցություն ենք ստացել դպրոցի տնօրենից՝ համագործակցել կոլեգաների հետ, մասնակցել դասապրոցեսներին, փոփոխել դասացուցակը

6. Համատեղ դասավանդում սկսել ենք փոքր քայլերից. նախ վերցրել ենք մեկ առարկա՝ աշխարհագրություն , հետո աստիճանաբար , սովորողների համար աննկատ կերպով նաև համատեղել մնացած առարկաները դասավանդող ուսուցիչների ջանքերը:

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները[1]: Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս նպատակահարմար ենք գտնուում նախ անդրադառնալ դաստիարակությանը և կարևորելով բարոյական, հայրենասիրական, աշխատանքային դաստիարակությունը կարող ենք տալ հստակ սահմանում. արդյոք ո՞րն է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հաշվի առնելով դաստիարակության առանձնահատկությունները, իսկ դրանք ենք.

-օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հանդես գալը,

- միանգամից չերևացող կողմը,

- երկարատևությունը,

-կոմպլեքսային բնույթը,

-երկկողմանի բնույթը,

-ամբողջական բնույթը,

կարող ենք նշել, որ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ընթացքում դրսևորվորվում է դաստիարակությունն իր բոլոր առանձնահատկություններով : Այսպիսի հետևություն մենք արել ենք դասապրոցեսի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման ժամանակ :

Անդրադառնանք նախ բարոյական դաստիարակությանը: Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության այն ոլորտներից է , որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում[2]:

---

[1] Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,էջ 275,

[2]Նույն տեղում, էջ 356,

Կ. Դ. Ուշինսկին բարոյական զարգացումն ավելի բարձր է գնահատում,քան մտավոր զարգացումը[1]:

Եվ, իհարկե, արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ ենք համարում հայրենասիրական դաստիարակությունը: Առանց հայրենիքի , առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը: Ցիցերոնն ասում էր. ,Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ հայրենիք»:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի , հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի , ազգի սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի , ավանի , քաղաքի , հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

Աշխարհագրության դասերին մենք անդրադարձել ենք հայրենի բնաշխարհին, ցույց տվել նրա շքեղ բնությունը, ապրելու և գործելու բնակլիմայական հարմար պայմաններին, կենդանական և բուսական աշխարհի բազմազանությանը և այլն:

Ինչպե՞ս ենք մենք սովորողների մեջ սերմանում հայրենասիրությունը և ձևավորում արժեքային համակարգը: Արժեքային համակարգ են ձևավորում մեր հայ մեծերի հանճարեղ ստեղծագործությունները, որոնք ուսուցանվում են գրականության դասաժամերին, իսկ աշխարհագրության դասերին անդրադառնում ենք նրանց ծննդավայրին , աշխարհագրական դիրքին , առանձնահատկություններին և այլն: Այդ ստեղծագործություններից է Խաչատուր Աբովյանի <<Վերք Հայաստանին>>: Աբովյանն իր <<Վերք Հայաստանի>> վեպով բացահայտում, արժևորում է հայոց ազգի հայրենասիրությունը, ֆիզիկական, հոգևոր ու բարոյական հարստությունը, Ապարանի, Քանաքեռի և Երևանի շքեղ բնությունը: Վերլուծելով Հովհաննես Թումանյանի հայրենասիրական ստեղծագործությունները աշակերտները կարողանում են արժևորել ու ներկայացնել Թումանյանի բացառիկ հայրենասիրությունը, ներշնչվում են հայրենասիրական վեհ գաղափարներով, Լոռվա բնաշխարհով, օրինակ «Անուշ» պոեմն ընթերցելը բավական է հասկանալու համար, թե ինչ շքեղ բնություն ունի Լոռին, միևնույն ժամանակ համագործակցելով Գրականության և ինֆորմատիկայի ուսուցիչների հետ մենք կարող ենք պատրաստել սահիկաշար Լոռվա բնության մասին և օգտվել աշխարհագրության դասագրքից ներկայացնել բնաշխարհն ու աշխարհագրական դիրքը: Ռաֆֆու հայրենասեր հերոսներն էլ, ճանապարհորդելով Հայաստան աշխարհի ամբողջ տարածքով, տեսնելով ամեն ինչ՝ արժևորում են հայրենիքը՝ ասելով հայ մարդուն, թե դա քոնն է,

որտեղ ապրել են քո նախնիները, որտեղ մեռել են քո նախնիները, դու էլ պետք է այնտեղ մեռնես։ Վարդանը, Ասլանը, Կարոն, հայ ֆիդայու նախատիպերն են և քաջության, պայքարի օրինակ են եղել ազգային երիտասարդության համար և դարձել ազգային գաղափարախոսներ։ Ռաֆֆու բոլոր հայրենասեր հերոսները՝ Դավիթ Բեկը, Ստեփանոս Շահումյանը, Մխիթար Սպարապետը, Բայանդուր իշխանը, Թորոս իշխանը, Մելիք Փարսադանը և ուրիշներ ֆիզիկական ու հոգևոր մեծ ուժի տեր մարդիկ են, որոնց համար հայրենիքը սրբություն է։ Նրանք մարդկային բարձր առաքինություններ կրողներ են։ Հանուն ազգի ու պետության ճակատագրի Սամվելը մեղանչում է ծնողական սրբության դեմ։ Սամվելը համոզված է, որ հայրենիքը բացարձակ է, իսկ մյուս բոլոր զգացմունքները՝ մասնավոր։ Մուրացանի Գևորգ Մարզպետունի վեպով նույնպես կարևորվում ու արժևորվում է հայ ժողովրդի ուժն ու միասնությունը, անձնուրացությունը, իսկական հայրենասիրությունը, անձնազոհությունը, արդարամտությունը, ամուր ընտանիքը և մարդկային մյուս բոլոր բարձրագույն առաքինությունները։ Մենք գտնում ենք, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր են խաղում մեծ հայրենասերների, ֆիդայիների, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Թևանի ապրած կյանքն ու գործունեությունները, Սարդարապատի հերոսներ Դանիել Բեկ և Պողոսբեկ Փիրումյանների , Սիլիկյանի անմոռաց կերպարները, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների , աշխարհահռչակ զորավարներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Խանփերյանի, Իսակովի հավերժող օրինակները և , իհարկե, 44-օրյա պատերազմում անմահացած մեր հերոսներն իրենց սխրանքներով, որոնց շարքում են Ալբերտ Հովհաննիսյանը, Շահեն Գալստյանը, Ալեն Մարգարյանը, Էդվարդ Բաբայանը։ Այսպիսի նվիրյակների մասին հարկավոր է պատմել սերունդներին, կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ զոհվածների ընտանիքների հետ, որովհետև ոչ հեռավոր անցյալում հայ ժողովրդի ծոցից ելան նոր դավիթներ և առյուծ ձևող նոր մհերներ, որոնք իրենց հայրենասիրությամբ անջնջելի հետք և մեծ անուն թողեցին մեր պատմության էջերում։

Բացի վերը նշվածից, սովորողների մեջ արժեքային համակարգ և հայրենասիրական դաստիարակություն ձևավորում ենք գերբի, դրոշի, օրհներգի, զինանշանի, մեր ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրության միջոցով, գրողների, գիտնականների, արվեստագետների հետ հանդիպման արդյունքում , որը մենք իրականացնում ենք պարբերաբար։

Չնսեմացնելով մտավոր, գեղագիտական, ֆիզիկական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակության դերը, այնուամենայնիվ, փորձի արդյունքում գրանցել ենք հետևյալ պատկերը



1- ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2- ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
3- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
4- ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
5- ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
6- ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին վեցնյակը

ԳԼԵԻԽ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Համագործակցային ուսուցման գաղափարաբանությունը մանրակրկիտ մշակվել է ամերիկյան մանկավարժների երեք խմբի կողմից (Ջ. Հոփկինսի համալսարան՝ Ռ. Սլավին, Մինեսոտայի համալսարան՝ Ջոնսոն եղբայրներ, Կալիֆոռնիայի համալսարան՝ Ջ. Արոնսոն):

Այսօր արդեն ամբողջ աշխարհում համագործակցային ուսուցումը դիտարկվում է որպես ավանդական մեթոդներով ուսուցման գործընթացի լավագույն այլընտրանք: Համագործակցային ուսուցման նպատակները չեն սահմանափակվում միայն գիտելիքների ձեռքբերմամբ, այստեղ առաջնային են նաև սոցիալական հմտությունների, փոխհաղորդակցական կարողությունների ձևավորման լայն հնարավորությունները և իհարկե աշխարհայացքի ընդլայնումը: Միայն համագործակցային ուսուցման դեպքում են երեխաները լայն հնարավորություն ունենում միասին աշխատելու, սովորելու, ստեղծագործելու, իրար օգնելու, զարգանալու:

Համագործակցային ուսուցման հիմնական գաղափարը միասին սովորելն է, այլ ոչ թե ինչ-որ մի բան միասին կատարելը: Պետք է միշտ նկատի առնել այն հանգամանքը, որ աշակերտներին մի սենյակում նստեցնելը, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային:

Փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը նվազ է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը:

Կրթության հայտնի տեսաբաններ Ժան Պիաժեն, Լև Վիգոտսկին և ուրիշներ, պնդում են, որ երեխայի մտավոր զարգացման գործում սոցիալական փոխազդեցությունն ու միջանձնային հաղորդակցությունը կարևոր գործոններ են:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

1. անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
2. հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը.
3. սթրեսի հաղթահարումը.
4. շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- դրական փոխկախվածություն.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթաց/ մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում:

Համագործակցային ուսուցման հիմնական մեթոդներից են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խաճանկար, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն: Անդրադառնանք մեր կիրառած մեթոդներին և ներկայացնենք , թե ինչպես ենք ձևավորում արժեքային համակարգ աշխարհագրության դասավանդման ընթացքում:

ԳԼՈՒԽ 2. 1

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Աշխարհագրության դասին սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման և ցանկալի արդյունքի հասնելու համար ուսուցիչը պետք է կարողանա դասը կազմակերպել՝ հաշվի առնելով և համադրելով ժամանակակից աշխարհագրության և մանկավարժության ձեռքբերումները: Դասավանդման ժամանակակից մեթոդներից ներկայացնենք ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում և կշռադատում) համակարգը:

ԽԻԿ–ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝

- Խթանում
- Իմաստի ընկալում
- Կշռադատում

Խթանման փուլի հիմնական նպատակներն են. նոր նյութի վերաբերյալ սովորող ների գիտելիքների բացահայտում, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելու միջոցով սովորողների ակտիվացում, աշակերտների մոտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտման ձևավորում: Դասի խթանման փուլում նպատակահարմար են կիրառել փոխներգործուն ուսուցման մեթոդները՝ մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր–զույգ կազմիր–քննարկիր, ձնագնդի, հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Իմաստի ընկալման փուլի նպատակներից են սովորողների մեջ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Դասի իմաստի ընկալման փուլում նպատակահարմար են կիրառել փոխներգործուն ուսուցման մեթոդները՝ Т–աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, խորանարդում, երեք բանալի և մեկ կողպեք և համագործակցային ուսուցման՝ խճանկար, շրջագայություն պատկերասրահում:

Կշռադատման փուլի նպատակներից են սովորողի նոր ստացած տեղեկատվությունը իր բառերով արտահայտելու կարողությունը, նոր գիտելիքների միաձուլումը ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրումը: Մեթոդներ, որոնք նպատակահարմար են կիրառել դասի կշռադատման փուլում. քառաբաժան, խորանարդում:

Դասապրոցեսը ավելի արդյունավետ, հետաքրքիր և հիշարժան դարձնելու համար կարելի է պարբերաբար դասից մի քանի րոպե տրամադրել նախապես պատրաստված նյութի ներկայացմանը աշակերտի, աշակերտների խմբի կամ ուսուցչի կողմից:

Ներկայացնենք այդպիսի մի քանի օրինակներ: Աստղային երկնքի լուսանկարում (երկրի շրջապտույտը ցուցադրելու համար): Եթե աշակերտներն աստղային երկինքը լուսանկարում են շտատիվի վրա ամրացված խցիկով, և լուսակայումը դրված է 1–2 ժամի վրա, ապա հնարավոր է գեղեցիկ կերպով ցուցադրել աստղերի շարժը: Ցանկալի է, որ լուսանկարելիս Բևեռային աստղը գտնվի տեսադաշտի կենտրոնում՝ ցուցադրելու, որ այն անշարժ է մնում, իսկ Երկիր մոլորակի առանցքը տվյալ պահին ուղղված է դեպի այդ հեռավոր աստղը: Աստղերի տեսանելի շարժը լուսանկարում կերևա փոքր համակենտրոնացված շրջանակների տեսքով: Լուսանկարները կարելի է տպել կամ ցուցադրել դասարանում: Ամառային արձակուրդի ժամանակ այցելած երկրի, տարածաշրջանի կամ տեսարժան վայրերի մասին ներկայացում պատրաստելու համար անձնական նկարների օգտագործում: Հանձնարարել աշակերտին պատրաստել նյութ այն վայրի աշխարհագրական տվյալների մասին, որտեղ անցկացրել է ամառային արձակուրդը: Այդ վայրի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական առանձնահատկությունները և այլն: Առավել պատկերավոր ներկայացում ապահովելու համար աշակերտը կարող է օգտվել արձակուրդի ժամանակ արված անձնական նկարներից: Հրաբխային երևույթների մասին հայտարարությունների տախտակի կամ ցուցադրության պատրաստում: Յուրաքանչյուր աշակերտ առանձին կարող է պատրաստել հայտարարությունների տախտակ, սակայն համագործակցության և աշխատանքի բաժանման առավելությունները հաշվի առնելով՝ այն առավել նպատակահարմար է պատրաստել փոքր խմբերով. այս եղանակն առավել արդյունավետ և արագ է: Այս թեման բավականին ընդգրկուն է, ուստի թիմերը պետք է վերցնեն առավել կոնկրետ թեմաներ կամ կարող են ընտրել նախանշված ենթաթեմաների շարքից (օրինակ՝ ժայռի տեսակները, հրաբխայնությունը, Վեզուվի ժայթքումը և այլն): Չնայած գրքերում, թերթերում և համացանցում հրաբխայնության մասին շատ տեղեկություններ կան, տվյալներ հավաքագրելիս կամ ներկայացնելիս կարող են խնդիրներ առաջանալ՝ կապված հայտարարությունների տախտակում տարածության սահմանափակ լինելու հետ: Դա նշանակում է, որ պետք է ընտրվեն սահմանափակ քանակով նկարներ և տեքստ: Տեսարժան լուսանկարները, ինքնուրույն պատրաստված գծապատկերները և պատկերներն առավել հետաքրքիր են դարձնում նման ցուցադրումները: Խրախուսելի է վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցած ամենակործանարար երկրաշարժերի մասին տեղեկությունների ներառումը:

Դպրոցի շրջակայքի քարտեզի պատրաստում: Համակարգչային ծրագրերի օգնությամբ խումբը կազմում է դպրոցի շրջակայքի քարտեզ: Տվյալները կարելի է ձեռք բերել չափումներ իրականացնելու միջոցով, սակայն, առկայության դեպքում, կարելի է օգտագործել նաև հին քարտեզներ և տիեզերքից նկարված լուսանկարներ: Իհարկե, աշխատանքը պետք է բավարարի իրական քարտեզին ներկայացվող բոլոր պահանջները, օրինակ՝ այն պետք է լինի ճշգրիտ, ընկալելի, հստակ, պետք է նշված

լինի մասշտաբը և այլն։ Որտեղ անցկացնել արձակուրդը։ Այս վարժության համար դասարանում ձևավորվում են 3 կամ 4 անձից բաղկացած խմբեր։ Ընտրվում է որևէ տարածք կամ տեսարժան վայր, ուր կարելի է ճամփորդություն կազմակերպել։ Տվյալ վայրի մասին համացանցից կարելի է տեղեկություններ գտնել և պատրաստել 8 րոպե տևողությամբ ներկայացում, որտեղ ներկայացված կլինի, թե ինչ կարելի է տեսնել տվյալ վայրում, ինչ պատմական (աշխարհագրական), կենսաբանական յուրահատկություններ ունի այդ վայրը, որքան կարժենա ճամփորդությունը, ինչպես հասնել նպատակակետ և այլն։ Անձրևոտ օրը...։ Աշակերտները բաժանվում են խմբերի և ուսումնասիրում իրենց մայրաքաղաքում զբոսաշրջությանը վերաբերող կայքերը, որոնցում զբոսաշրջային ծրագրեր և հայտնի տեսարժան վայրերի այցելություններ են առաջարկվում։ Նրանք պետք է տեսարժան վայրերի և հնարավոր ժամանցի մասին տեղեկություններ հավաքեն։ Աշակերտները հեշտությամբ կարող են գտնել արևոտ օրերին զբոսաշրջիկների համար բացօթյա տեսարժան վայրեր այցելություններ կազմակերպելու վերաբերյալ մեծ ծավալի տեղեկություններ։ Այս անգամ, սակայն, նրանց առաջադրանքն այնպիսի շրջագայություններ առաջարկելն է, որոնց քաղաք այցելած զբոսաշրջիկները կարող են մասնակցել անձրևոտ օրերին։ Այս նպատակով անհրաժեշտ է կազմել այդ վայրերի և ժամանցի տարբերակների ցանկ, հավաքել նկարներ, քարտեզներ և դրանց առնչվող այլ անհրաժեշտ տեղեկություններ։ Դրանց միջոցով աշակերտները պետք է պատրաստեն թռուցիկ, որը կպարունակի համապատասխան երթուղիները, քարտեզները, հետաքրքրությունը շարժող գովազդներ, նկարներ և այլն։ Թռուցիկը պետք է լինի այնպիսին, որ այն հնարավոր լինի տալ իրական զբոսաշրջիկներին, այսինքն՝ այն պետք է լինի տեղեկատվական, հասկանալի և գրավիչ, առաջարկի ժամանցի լայն հնարավորություններ։ Առաջադրանքն ավարտելուց հետո դասարանում կազմակերպվում է «զբոսաշրջության տոնավաճառ», որի ընթացում աշակերտները փորձում են իրենց փաթեթները վաճառել «հաճախորդներին»։ Հնարավորության դեպքում զբոսաշրջության տոնավաճառին կարելի է հրավիրել այլ դասարանների աշակերտներին՝ իրավիճակն ավելի իրական դարձնելու նպատակով։ Հետագա հնարավորությունները։

• Հնարավորության դեպքում, շրջագայությունների ամենից շատ ուղեգրեր «վաճառած» խումբն իր իսկ ծրագրի հիման վրա իրական շրջայց է կազմակերպում քաղաքում։

• Եթե թռուցիկներն իսկապես լավ որակի են, աշակերտները կարող են դրանք տրամադրել տեղական զբոսաշրջության գրասենյակի համապատասխան մարմիններին։

Ամփոփում։ Աշխարհագրությունը երկրի մասին գիտությունների համակարգ է, որի ժամանակակից հետազոտության օբյեկտը միասնական երկրոլորտն է։ Ինչպես յուրաքանչյուր առարկա, աշխարհագրությունը ևս ունի դասավանդման մեթոդիկայի իր առանձնահատկությունները։ Աշխարհագրության դասին ցանկալի արդյունքի

հասնելու համար ուսուցիչը պետք է կարողանա դասը կազմակերպել ժամանակակից աշխարհագրության և մանկավարժության ձեռքբերումները հաշվի առնելով և համադրելով: Առաջարկվում է դասերի ընթացքում ավելի հաճախ կիրառել դասի անցկացման ոչ ավանդական մեթոդներ, որոնք էլ ավելի կբարձրացնեն դասի արդյունավետությունը և թույլ չեն տա աշակերտին ձանձրանալ:

Օրվա դասի պլան

Դասարան-9

Առարկա-Հայաստանի աշխարհագրություն

Դասի թեման՝ Սյունիքի մարզ

Դասի տիպը՝նոր դասի հաղորդում

Չափորոշչային պահանջ՝գիտելքներ,կարողություններ և հմտություններ Սյունիքի աշխ.դիրքից,բնակլիմայական պայմաններից և ռեսուրսներից,բնակչությունից ու նրա զբաղմունքից,էկոլոգիական խնդիրներց և զարգացման հեռանկարներից:Արժեքային համակարգի ձևավորում:

Նպատակը՝ իմանալ բնական պայմանները,ռեսուրսները և բնակչության սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները:

Խնդիրները՝ կատարելագործել սովորողների գիտելիքները Սյունիքի մարզի վերաբերյալ,կատարելագործել նրանց գործնական կարողությունները:

Ակնկալիքներ-քարտեզի օգնությամբ զբոսաշրջային երթուղի կազմակերպել Սյունիքի մարզի վերաբերյալ,կատարելագործել նրանց գործնական կարողությունները:

Ուսուցման մեթոդներ ու հնարքները՝մտագրոհհայտորոշիչ թեստ,համագործակցային,ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

Ուսուցման պարագաները՝ՏՀՏ,Սյունիքի մարզի քարտեզ,ուրվագծային քարտեզներ՝ՀՀ մարզերը,մարկերներ ,Ա4ֆ գունավոր թղթեր:

Արժեքային համակարգ-իմանա և արժևորի իր բնօրրանը,մարզի աշխարհագրական դիրքը,պատմամշակութային հուշարձանները,թվարկի անվանի հերոսներին,նշի մարզի և իր բնակավայրի հիմնախնդիրները

Ներառական և միջառարկայական կապեր՝բնագիտություն 5րդ,աշխարհագրություն 7-րդ,հայոց պատմություն:

Դասի ընթացքը ա.կազմակերպական մաս՝դասարանի կահավորում հաճախումների հաշվառում,խմբերի ձևավորում՝տերասեռ,տարակազմ,ժամանակավոր

Բ.խթանման փուլ՝մտագրոհ.հարց ու պատասխանով կատարել հպանցիկ անդրադարձ ՀՀ վարչատարածքային կառուցվածքին:Հայտորոշիչ թեստով ամփոփել Վայոց Ձորի և Տավուշիմարզերի աշխարհ.բնութագրերը(պատասխանը՝այո կամ ոչ)

1)Վայոց Ձորի և Տավուշի մարզերը բնակչության թվով ՀՀ մարզերիցամենափոքրն են-----

2)Երկու մարզերում էլ գերակշռողը գյուղական բնակչությունն է-------

3)Երկուսն էլ սահմանակցում են Ադրբեջանին-----

4)Երկուսն էլ ընդհանուր սահման ունեն Սյունիքի հետ----------

5)Վայոց Ձորում են գտնվում Նորավանքը և Գնդեվանքը-----

6)Երկու մարզերում էլ տնտեսության զարգացած ճյուղը արդյունաբերությունն է----

7)Տավուշը ՀՀ ամենաանտառաշատ մարզն է

8)Վայոց Ձորի մակերևույթը տիպիկ հարթավայրային է -----

9)Տավուշում են գտնվում Դիլիջանի ազգայի պարկը,Գոշավանքը,Հաղարծինը---

10)Երկու մարզեր էլ ունեն զբոսաշրջային դեր-----

Յուրաքանչյուրին տալ մեկական հայտորոշիչ թեստ ՀՀ ուրվագծային քարտեզ,որում պետք է նշեն Տավուշի և Վայոց Ձորի մարզկենտրոներն ու մյուս քաղաքները:Սովորողներն բացատրել կատարման և գնահատման մեթոդաբանությունը :Հատկացված 5-6 րոպե հետո էկրանին ցուցադրվում է ճիշտ պատասխանները,իսկ աշակերտները կատարում են ինքնագնահատում:Ուսուցիչը հետևում,համակարգում է աշխատանքը,հավաքում լրացված և ինքնաստուգված թերթիկները:

Իմաստի ընկալման փուլ-5-ական աշակերտներից կազմված խմբերին տալ դասագիրք առանձնացված համապատասխան հատվածը,որը 8-10 րոպե ընթերցելուց հետո յուրաքանչյուր խմբից պատահականության սկզբունքով երկու սովորող ներկայացնում են բանավոր՝2-3 րոպեում:Այդ ընթացքում խմբից մի այլ աշակերտ ցույց է տալիս քարտեզին:

Ուսուցիչը վերահսկում համակարգում է խմբային աշխատանքի գործընթացը 23-25 րոպե

1-ին խումբ Սյունիքի տարածքը,դիրքը,սահմանները,ռելիեֆը,օգտակար հանածոները

2-րդ խումբ Սյունիքի մարզի կլիման ,ջրագրությունն ու օրգանական աշխարհը

3-րդ խումբ-Սյունիքի մարզի բնակչությունը և նրանց զբաղմունքը

4-րդ խումբ մարզիտնտեսության ընդհանուր բնութագիրը,արդյունաբերություն

5-րդ խումբ գյուղատնտեսությունը,տրանսպորտը ու ոչ արտադրական ոլորտը

Կշռադատման փուլ- յուրաքանչյուր խումբ իրարից մյուս խմբերին է ներկայացնում երեք հարց այո կամ ոչ պատասխանով 1-նը-2 - րդին2-րդը-3րդին-3րդը-4-րդին 4րրդը 5-րդին 5-րդը1-ին,որից հետո կատարվում է փոխադարձ գնահատում:Ուսուցիչը հավաքում է լրացված ու փոխատուցված թերթիկները:

Գնահատում-որպես նոր դաս հիմնական գնահատումը ձևավորող է հայտորոշման,ինքնագնահատման,և փոխադարձ գնահատման ձևերով ,կարելի է որոշ աշակերտներին տալ միավորային գնահատական,հաշվի առնելով նրանց պատասխանների ճշտությունը,խոսքի կուլտուրան ,տեղագրական մոտեցում և այլն:

Տնային հանձնարարություն-սովորել պատմել դասը տետրում թվարկել Սյունիքի Էկոլոգիական հիմնախնդիրները և առաջարկել լուծումներ

Անդրադարձ-դասից հետո ուսումնասիրել հայտորոշիչ թեստը ուրվագծային քարտեզներին ու փոխադարձ գնահատման թերթիկներիը առանձնացնելով սովորողների ուժեղ և թույլ կողմերը:

Արժեհամակարգի ձևավորման դասի օրինակ

Այժմ դասի օրինակով ներկայացնեմ,թե ինչպես են աշակերտների մոտ ձևավորվում հայրենի բնության նկատմամբ,իրենց շրջապատի բնառեսուրսայի ներուժի ռացիոնալ օգտագործման,պահպանության և վերականգնման կարևորությունը:Դա լավագույնը ստացվում է իններորդ դասարանի Հայաստանի աշխարհագրություն դասընթացի <<Սյունիքի մարզ>> թեմայի ուսուցման ընթացքում:Կարևորեն մարզի աշխարհագրական դիրքը,բնական և պատմամշակութային հուշարձանները,որպես հանքարդյունաբերության գլխավոր շրջան:Արժեհամակարգին ձևավորում տալիս եմ նաև հասարակական աշխարհագրություն աշխարհի քաղաքական բաժանում,աշխահի բնակչություն և կազմ և բազմաթիվ այլ թեմաներ ուսումնասիրելիս:Պետք է դաստիրակել խորը հայրենասիրություն,ձևավորել հայրենիքի,ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվության ու հպարտության,անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը ,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատիվ գործ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

2. Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

3. Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը։

4. Բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է։

5. Դպրոցականների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում։

6. Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ։

7. Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա։

8. Աշխարհագրության դասին ցանկալի արդյունքի հասնելու համար ուսուցիչը պետք է կարողանա դասը կազմակերպել ժամանակակից աշխարհագրության և մանկավարժության ձեռքբերումները հաշվի առնելով և համադրելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ամիրջանյան Ա. , Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

Կովալյով Ն. Ե. , Մանկավարժության տեսություն, Եր., 1977:

Барабанщиков А . В , Проблемы педагогической культуры преподавателей вузов (к вопросу о сущности педагогической культуры) // Советская педагогика, 1981, № 1,

Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2,

Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1,